



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4992

491.99-8

C-93

1873

2010

Հայկ. Ազգ. Գր. Գործարան, Երևան 1913
Համ. 453.

ՆՈՐ

Ք Ե Ր Ա Կ Ա Ն

ՈՐ Է

ԱՅԲԻԵՆԱՐԱՆ

ԵՒ

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ ՏՂԱՅՈՑ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գ. ՏԷՕԼՎԷԹԵԱՆԻ.



Ի ԹԷՈՂՈՍԻԱ,

1873 = ՌՅԻԳ.



491.99-3
2-93

arm.
453.

491 99-8
v-93

ևՈՐ

Ք Ե Ր Ա Կ Ա Ն

ՈՐ Է

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ՏՂԱՅՈՑ



Ի ԹԷՂՈՒՍԻԱ,

Ի Տպ. Դպրան. Վիճ. Նախիջեւանի և Վեսարայիոյ.

1873 = ՌՅԻԲ.

Imperial Asiatic Museum
Leningrad
1873

500

ՄԱՆԿԱՎԱՐԻՑ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՌՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ



Երոպայի յառաջադէմ ազգերը վերջին ժամանակներս աւելի կերպով մը կաշխատին որ դիւրացընեն տղայոց կարգաւ ու գըրել սովորեցընելուն եղանակը, եւ անով սիրելի ընծայել անոնց ուսումը ի մանկութենէ. մանկավարժից աշխատութիւնն ալ եթէ ոչ թեթեւ՝ գոնէ աւելի պտղաւէտ անել:

Հարկ չէ ասել որ մեր ազգին դպրոցներուն մէջ առ հասարակ պակաս է այսպիսի եղանակ կամ աշխատանք մը, որով տղայոց համար զուարճալի բան դառնայ սկզբնական ուսումը: Խիստ շատ դպրոցներու մէջ ոչ միայն ամիսներով ու տարիով կտոճըին տղայք *պնակն* ու *այրբնառանը*, այլ եւ որ մեծն է՝ սաստիկ ձանձրութեամբ ու նեղութեամբ դպրոց կերթան. փոխանակ սիրով եւ ուրախութեամբ ուսում առնելու՝ չարութեան ու դատարկութեան կուտան իրենց ինքըր, եւ իրարմէ իրենց չգիտցած չարութիւններն անգամ կտոճըին:

Վաղուց հասկըցուած է նաեւ մեր մէջ՝ թէ ո՞րքան հարկաւոր է այն հին ոճը թողուլ, գոնէ ըստ մասին, ու եւրոպական նորահնար ոճերուն լաւերն ու գլխաւորները մտցընել մեր դպրոցներուն մէջ. բայց մինչեւ ցայժմ գործնական կերպով այս բանիս առաջնորդող դասագիրք չիմք ունեցած, զէթ մեր կողմերը:

50510-ահ



21

36436-66

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 23 Сентября 1872 г.

Ուրիշ մանր գրուածքներէ զատ՝ երկու տարի առաջ հրատարակուեցաւ ի Փեթերպուրկ տետրակ մը՝ այս վերնագրով. «Հայերէն կարդալ ու գրել ուսուցանելու հրահանգ». այս տետրակը շատ գեղեցիկ ու գործնական խրատներ կուտայ մանկավարժներուն, եւ ամենայն կերպով արժանի է նոցա մտադրութեանը. միայն թէ հիւսիսաբնակ Հայոց բարբառովը գրուած լինելովը՝ ազգիս մեծ մասին համար դժուարիմաց է. բաց յայնմանէ, ինչպէս որ մեզ կերելի, չափազանց հետեւողութիւն է այն գերմանական մեթոտներուն. այնպէս որ տղայոց համար *հերական* կարդալը դիւրացընելու տեղ՝ դժուարացուցածի պէս է, եւ գրեթէ *հերականոթիւն* սովբելու նման դժուար բան մը դարձած է այն հրահանգին մէջ: Ուստի ի խնդրոյ բազմաց հարկադրեցանք շարադրել առաջիկայ նոր Քերականը՝ եօթնէն մինչեւ տասը տարեկան տղայոց համար:

Երկու մաս բաժնած եմք այս քերականը. առաջինը *Այրբեհարան*, երկրորդը *Ընթերցարան*: Առաջնոյն նպատակն է այբուբենը սովբեցընել տղայոց, թէ՛ ձայնական առողանութեամբ, թէ՛ տառերուն ձեւերը ճանչցընելով, թէ՛ վանկերը հեգել տալով, թէ՛ բառեր կարդացընելով, եւ թէ գիր սովբեցընելով: Այս մասին համար վեց ամիս ժամանակ սահմանած եմք, եւ տարակոյս չունիմք որ բաւական է: — Երկրորդին վախճանն է՝ նախ՝ տղայոց գրքավարժութիւնը բանալ, եւ երկրորդ՝ նոցա միտքը սրել, ուշադրութիւնը գրաւել, եւ հետաքրքրութիւնը արթնցընել՝ բան սովբելու: Ընթերցարանին վերջն ալ աւելցուցինք փոքրիկ հաւաքում մը խրատական գուարձալի կարծ կարծ ոտանաւորներու եւ առակներու, որ տղայոց յիշողութիւնը սրելու, մտքերնին զարդարելու եւ սրտերնին կրթելու շատ յարմար են: Վարժապետին գործն է պահանջել յառաջադէմ եւ ուրիշներէն աւելի սրամիտ աշակերտներէն որ երբեմն երբեմն այն ոտանաւորներուն մէջէն այս կամ այն կտորները բերնուց սովբին եւ յստակ առողանութեամբ ասեն:

Որովհետեւ այս գրուածքէն ալ կարելի չէ երեւելի օգուտ մը քաղել՝ առանց գիտնալու թէ ասոր վրայէն ի՞նչ կերպով պէտք է դաս տալ տղայոց, մանաւանդ առաջին մասը, որ է Այբբենարանը, ահա կղնեմք այս տեղ գլխաւոր ու հարկաւոր եղանակները, յորդորելով մանկավարժներն որ երկայնամիտ համբերութեամբ ձեռք զարնեն այս օգտաւէտ աշխատութեան ի յառաջադիմութիւն ազգային կրթութեան: Փորձով հաստատուած ճշմարտութիւն է որ այբուբենը տղայոց ճանչցընելը, եւ յետոյ տառերը իրարու հետ կապելով հեգել տալը, մեծ աշխատութեան եւ ժամանակի կարօտ բան է: Այս երկու աշխատութիւնն ալ դիւրացընելու համար մտածուած է որ

Նախ՝ հարկաւոր է ամէն բանէ առաջ սովբեցընել տղայոց այբուբենի ձեւերուն գլխաւոր կտորները գծագրել սեւ տախտակին վրայ, եւ յետոյ *ընչանակ* ասուած սեւ քարին վրայ:

Երկրորդ՝ տղայոց ձեռքը գիրք կամ քերական տալէն առաջ՝ պէտք է անոնց *ձայնական անչանալք* կարդալ սովբեցընել. այսինքն նախ ձայնաւոր տառերուն հնչմունքը, յետոյ բաղաձայններունը:

Այս երկու նախընթաց կրթութեանց կերպերն ալ դնեմք այս տեղ՝ եւրոպացւոց գրուածքներէն քաղելով, եւ նոցա մեթոտը մեր հայերէն այբուբենին յարմարցընելով:

Ա.

Վարժապետը կհաւաքէ աշակերտները սեւ տախտակին առջեւը. կկանգնեցընէ զանոնք կէս կլոր ձեւով՝ որ արգելք չլինին իրարու. կցուցընէ աշակերտաց՝ թէ ի՞նչ կերպով պէտք է բռնեն կաւիճը աջ ձեռքով, եւ կապսպրէ որ նային թէ ինքը ի՞նչ կերպով կղնէ տախտակին վերայ կաւիճով *ձեկ կէս*. Կհարցընէ տղոցմէ մէկուն թէ ի՞նչ է այս գրածս, եւ կպահանջէ որ պատասխանեն զատ զատ՝ եւ ապա ամէնքը ի միասին՝ թէ *կէս* է: Յետոյ կհրամայէ տղոցմէ մէկուն կամ մէկալին՝ որ իրենք դնեն կէտը:

Կարբէ տղայոց գրած կէտերն ու *երկու կէս* կղնէ, մէկը վեր' մէկը վար. կհարցընէ ամենուն մէկէն' թէ քանի՞ կէտ դրի. երբոր աշակերտք կալատասխանեն թէ *երկու կէս*, վարժապետը կհարցընէ մէկուն կամ մէկային' թէ ո՞րն է վերի կէտը, եւ ո՞րն է վարինը: Անոնց վրայ մէկ կէտ ալ կաւելցընէ ու կհարցընէ թէ քանի՞ կէտ եղաւ: — *Երեք կէս*: — Իրաւ է, *մեկ, երկու, երեք կէս*. մէկը վերը, մէկը վարը. երբորդը ո՞ւր է: — Աշակերտաց մէկը, *մեջ տեղը*: — Լաւ է: Անոնք սրբելէն ետեւ՝ աշակերտաց դնել կուտայ *երկու կէս*, ապսպրելով որ վարի կէտը շիտակ վերինին ներքեւը դըրուի: Յետոյ կսովբեցընէ նոյն կերպով *երեք կէս* դնել տակէ տակ՝ իրարմէ հաւասար հեռաւորութեամբ:

Այս կրթութենէն ետեւ աշակերտք կնստին իրենց տեղերը, եւ ջնջանակին վրայ կղնեն կէտերը, բայց կարգով ու հրամանով կամ *բախով*. այսինքն երբոր վարժապետը կասէ ամենուն մէկէն, *մեկ, երկու, երեք*: Քանի մը անգամ այսպէս վարժապետին հրամանաւը կէտերը դնելէն ետեւ, առանց հրամանի սպասելու ալ երեք երեք կէտ կղնեն, մինչեւ որ մեծ մասը ինչպէս որ պէտք է վարժին շարելու այն կէտերը:

Այսպէս կրկնելու է ոչ միայն այս, այլ եւ բոլոր հետագայ կրթութիւնները՝ մինչեւ որ աշակերտաց մեծ մասը չափաւորապէս վարժի. եւ պէտք չէ աճապարել որ մէկ կրթութենէ միւսին անցնուի՝ առաջինը լաւ չսովբած:

Երկրորդ կրթութեան համար դարձեալ կհաւաքուին աշակերտները սեւ տախտակին առջեւը: Վարժապետը նախընթաց կրթութեան ոճովը նորէն երեք կէտ կղնէ տախտակին վրայ, բայց ոչ ուղղահայեաց դրիւք կամ տակէ տակ, հապա հորիզոնական դիրքով, եւ կհարցընէ աշակերտաց զատ զատ, երբեմն ալ ամենուն միանգամայն, թէ ո՞ր կէտն է *աջակողմեանը*, ո՞րն է *ձախ կողմինը*, ո՞րն է *մեջ տեղինը*: Աշակերտք նոյնպէս կշարեն կէտերը՝ որքան կարելի է ուղիղ գծի վրայ. յետոյ իւրաքանչիւր աշակերտ կշարէ նոյն կէտերը ջնջանակին վրայ, առաջ վարժապետին հրամանովը, *մեկ, երկու, երեք*, յետոյ մինակ:

Երբոր բաւական կվարժին աշակերտք այս կրթութեան, վարժապետը կէտերը կաւելցընէ դէպ ի վեր, նաեւ տողին շտկութեամբը, եւ կսովբեցընէ աշակերտաց ոչ միայն շիտակ ու իրարմէ հաւասար հեռաւորութեամբ շարել կէտերը, հապա նաեւ համբել զանոնք:

Այս կրթութեան հետ ի միասին կվարժին տղայք գրասեղանին առջեւը շիտակ նստելու, կուրծքերնին գրասեղանին վրայ շատ չծռելու եւ այլն: Նմանապէս վարժապետին հրամանովը ձեռքերնին շարժել սովբելով, կվարժին կանոնաւոր ու միակերպ շարժման, որ շատ հարկաւոր բան է գեղեցիկ ու արագ գրութեան վարժելու համար: Ասով կվարժին տղայք նաեւ *ուղիղ գիծ* քաշելու, կէտերը իրարու հետ այն գծովը միացընելով դէպ ի վեր, դէպ ի վար ու դէպ ի տղին շտկութեամբը: Գծերը մէկ գծագրութեամբ, այսինքն անընդհատ կերպով պիտի քաշուին, եւ ո՞րքան կարելի է մէկ կէտի վրայ իրար պիտի կարեն: Սովբեցընելուն կերպը նոյնը պէտք է լինի՝ ինչ որ ասինք կէտերը դնելուն համար:

Երբոր վարժին աշակերտները ուղիղ գծեր քաշել, լաւ նստիլ, լաւ բռնել ջնջանակը, վարժապետին հրամանովը ճիշդ շարժել ձեռքերնին, այնուհետեւ կարելի է սովբեցընել նոցա այբուբենին ոչ թէ բուն տառերուն ձեւերը, այլ ձեւերուն գլխաւոր կտորներուն գծագրութիւնը աստիճանաբար, ինչպէս որ կտեսնուի մեր դրած օրինակին մէջ:

Այս ամենայն կրթութիւնները այնպէս անել տալու է տղայոց որ վարժին նաեւ զանոնք իրարու հետ կապել՝ առանց ձեռքերնին տախտակէն վերցընելու:

Այբուբենի զանազան ձեւերուն գլխաւոր կտորները գրծագրելու վարժելէն ետեւ՝ պէտք է անցնին աշակերտք ձայնաւոր ու բաղաձայն տառերու հնչումը սովբելու առանց գրքի: Եւ այս կլինի երկրորդ գլխաւոր կրթութիւնը:

Բ.

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԱՌՈՂԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՀՆՁՄԱՆ ՏԱՌԻՑ.

Աշակերաները տեղերնին նստած կժողու վարժապետը, եւ կասէ անոնց որ նային թէ ինքը ի՞նչ հնչմունք կարտաբերէ, եւ յստակ ձայնով ու երկարելով կհնչէ, *ա*: Յետոյ նոյնը հնչել կուտայ զատ զատ այս կամ այն աշակերտին եւ ամենուն մէկէն:

Անկից կանցնի երկրորդ հնչման, որ է *է*, եւ նոյն կարգով կվարժեցընէ իրեն պէս հնչելու:

Յետոյ կսովրեցընէ *ը* հնչումը, *ի* հնչումը, եւ ապա *օ*, *ու*, *ն*, *է*:

Երբոր աշակերտները կվարժին այս ձայնաւորաց հընչմունքը մէկմէկէ որոշելու, վարժապետը ասել կուտայ նոցա կարգաւ կամ առանց կարգի, *ա*, *է*, *ը*, *ի*, եւ այլն, մինչեւ վարժին տղայք առանց շփոթելու հնչել կարգաւ այն տառերը:

Յետոյ վարժապետը միավանկ բառ մը կհնչէ յստակ ձայնով. զոր օրինակ *բան*, եւ կհարցընէ աշակերտաց թէ այս խօսքին մէջ ի՞նչ ձայնաւոր տառ կամ ի՞նչ հնչում կայ. *ան*, թէ *օ*, թէ *ի*, եւ այլն: Սրամիտ տղայք իսկոյն կասն ուղիղը. իսկ եթէ եւ ոչ մէկն ալ չասէ, վարժապետը ին ը կհասկըցընէ. յետոյ նոյնպիսի միավանկ բառեր կհնչէ, եւ իրարմէ որոշել կուտայ հնչմունքը. զոր օրինակ *ասգ*, *գառ*, *ծեր*, *մաս*, *աղ*, *օղ*, *ջուր*, *գիր*, *տուն*, *տղ*, *նար*, *գին*, եւ այլն:

Երբոր աշակերտք ասոնց եւ այսպիսի շատ բառերու ձայնական հնչումը բերաւ ու Յիշդ կորոշեն, այն ատեն կանցնի վարժապետը երկավանկ ու եռավանկ բառերու հնչման կրթութիւնը անել տալու. զոր օրինակ *անն*, *աղանակ*, *պատարագ*, *բանակայ*, *եկեղեցի*, *բաղախ*, *սանար*, *բերել*, *փխխտոխայ*, *ասուածասուր* եւ այլն:

Այս կրթութեան ժամանակ գլխաւոր դիտելիքն այս է որ սղայք *ասիականարար* առաջ երթան՝ դիւրինէն դէպ ի դժուարը: Վարժապետին պարտքն է նաեւ աշխատիլ որ իւրաքանչիւր ձայնաւորի հնչումը ուղիղ սովրին աշակերտք, այնպէս որ լաւ զանազանն իրարմէ *ե* ու *է* տառերը, նմանապէս *օ* եւ *ու* ձայները:

Այնուհետեւ կրնայ վարժապետը առաջարկել աշակերտաց որ իրենք իրենց կողմանէ ասեն զանազան բառեր, եւ թէ որո՞նք են անոնց մէջի ձայնական հնչմունքը. այս շատ զուարճալի կրթութիւն է սղայոց համար՝ հանելուկ լուծելու նման:

Երբոր աշակերտք այս ամենայն կրթութեանց ինչպէս որ պէտք է վարժին, այնուհետեւ կրնայ վարժապետը կարգաւ՝ բայց քիչ քիչ գրել սեւ տախտակին վրայ ձայնաւոր տառերուն ձեւերը, եւ հասկըցնել աշակերտաց. զոր օրինակ թէ *ա* հնչման ձեւն է այս, *ա*. նոյնը պէտք է գրէ շատ անգամ եւ գրել տայ տղայոց՝ առաջ սեւ տախտակին վրայ, յետոյ իրենց ջնջանակին: Երբոր *ա* գրելը կսովրին, պէտք է սովրեցընել միւս ձայնաւորաց ձեւերը՝ նոյնպիսի կարգով, հանդարտութեամբ ու երկայնատուութեամբ, մինչեւ որ բոլոր ձայնաւորները գրել ու ձանչնալ սովրին: Առոգանութեան կամ ձայնական հնչման վարժութիւնը ձայնաւորներէն ետքը պիտի անցնի բաղաձայն տառերուն, այն կարգաւ՝ ինչ որ դրուած է քերականիս սկիզբը:

Բաղաձայններու հնչումը եւս նոյն ոճով պէտք է սովրին աշակերտք՝ ինչպէս որ սովրեցան ձայնաւորներունը. յետոյ կարգաւ սովրին անոնց ձեւերը գրել սեւ տախտակին ու ջնջանակին վրայ:

Այս ամենայն կրթութիւններէն ետքը կարող են աշակերտք անցնիլ միավանկ ու երկավանկ բառեր գրելու եւ կարգալու կրթութեան, եւ այն՝ առանց պարտաւորութեւր որ տառերուն անուններն ալ տան, ինչպէս որ առաջ սովորութիւն էր ամէն տեղ, եւ մինչեւ ցայժմ մնացած է նոյն սովորութիւնը շատ տեղ:

Ինչ որ եւրոպայի հմուտ մանկավարժները երկարօրէն ու շատ օրինակներով կտօմբեցնեն յայսմ մասին, յուսամք թէ հանձարեղ վարժապետները մեր այս համառօտ գրուածքէն կհասկընան եւ ի գործ կդնեն, մնացածը իրենց կողմանէ հնարելով եւ զարդարելով, եւ այնպէս հասնելով այս գեղեցիկ եւ օգտակար ոճոյն նպատակին, որ է տղայոց աչքն ու ձեռքը վարժեցընել տառերուն սկզբնական ձեւերը գծագրելու, ականջնին վարժեցընել ո՛ր եւ իցէ խօսքին մէջի որոշ հնչումը գտնելու, լեզունին՝ հնչմունքները յստակ կերպով արտաբերելու, նոցա մտադրութիւնը՝ որ դիտեն ո՛ր եւ իցէ խօսք եւ հնչումն. եւ վերջապէս տղայոց աչքը, ձեռքը, ականջը, լեզուն եւ մտադրութիւնը վարժեցընել ո՛ր եւ իցէ խօսք լուծելու եւ բաղադրելու, թէ՛ բերնով արտաբերուած լինին անոնք, թէ գրուած եւ թէ տպուած :

Այսպիսի կրթութեամբ վերջապէս կտօմբի տղան ոչ միայն կարդալ ու գրել, հապա նաեւ աշխատիլ ու միտքը աշխատեցընել, այնպէս որ գրեթէ առանց դժուարութիւն մը իմանալու կտօմբի յաջողութեամբ այս տաժանելի երեւցած արուեստը :

Այսքանը բաւական համարելով վարժապետաց յիշեցընել այս տեղ, մնացեալ հարկաւոր գիտելիքները ծանօթութեամբ կդնեմք քերականիս պէտք եղած տեղերը նոյնպէս ի դիւրութիւն վարժապետաց :



Ք Ե Ր Ա Կ Ա Ն

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ.

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
 Ժ Ի Լ Խ Ծ Կ Ն Պ Ղ
 Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ղ
 Ռ Ս Վ Տ Բ Յ Ի Փ Գ
 Օ Ֆ. (1)

(1) Այս այբուբենը դրուած է կարգաւ՝ պատկերի նման. իսկ դասերը պէտք է սկսիլ յաջորդ երեսի ձախաւորները ճանջընելէն :

ՁԱՅՆԱՒՈՐԲ.

ա . ե . է . ը . թ . ո . օ . ու . (1)

ԲԱԳԱՁԱՅՆԲ.

բ . գ . դ . զ . թ . ժ . լ . խ . ծ . կ .
հ . ճ . ղ . ճ . մ . ն . շ . չ . պ . ջ .
ւ . ս . վ . տ . ր . զ . փ . ք . ֆ .

բբ , գգ , դդ , զզ , թթ , ժժ , լլ , խխ , ծծ , կկ , հհ ,
ճճ , ղղ , ճճ , մմ , նն , շշ , չչ , պպ , ջջ , ուու , սս ,
վվ , տտ , րր , զզ , փփ , քք , ֆֆ . (2)

(1) Ձայնաւորաց մէջ գլխաւորները, կամ թէ որոշ ննջմամբ ուրիշներէն զատուողներն ասուք են. ա, ե, է, օ. ուստի առաջ ասանք պէտք է սովորեցնել տղայոց. յետոյ հ, ղ, ո, ու:

(2) Բաղաձայնից հնչմունքը ցուցնելու համար՝ իւրաքանչիւրին դիմացը շ տառը դրուած է, ոչ թէ գրերուն բուն անունները փոխելու, հապա անոնց ձայնական արտաբերութիւնը ցուցնելու համար. ուստի կարելի է ու պէտք է այնպէս արտասանել ու տղայոց հնչել տալ որ իբր թէ շ ձայնաւորը ամենեւին ալ զլսուի:

ՄԵՐ ՏԱՌԵՐՈՒՆ ԲՆԻԿ ԱՆՈՒՆՆԵՐԸ.

ա , այբ	խ , խե	չ , չա
բ , բեց	ծ , ծա	պ , պե
գ , գիմ	կ , կեց	ջ , ջե
դ , դա	հ , հոյ	ւ , ուա
ե , էչ	ձ , ձա	ս , սե
զ , զա	շ , շաւս	վ , վեւ
է , ե	ճ , ճե	տ , տիւց
ը , ըբ	մ , մեց	ր , րե
թ , թոյ	յ , յի	ց , ցոյ
ժ , ժե	ն , նու	ւ , լիւց
լ , լեցի	շ , շա	փ , փիւր
լ , լիւց	ո , ո	ք , քե
	օ , օ .	
	ֆ , ֆե . (1)	

(1) Երբոր աշակերտք լաւ կճանչնան ու կսովորին այբուբենից ձեւերն ու հնչմունքը, պէտք է սովորին անոնց անունները, որ սրբոյն Մեսրոպայ հնարածներն են, բաց ի վերջի երկուքէն, որ են օ, ֆ:

Հ Ե Պ Ա Ր Ա Ն.

աղ . աջ . ափ .	իժ . իր . իմ .
եղ . եղ . եփ .	ոհ . ոճ . ոխ .
էջ . էր . էս .	օր . օճ . օղ .
ըթ . ըն . ըս .	ում . ուն . ուր ⁽¹⁾ .

բա , բա ըի	յա , յա ղէ
գա , գա ըի	նա , նա ղէ
դա , դա ըի	շա , շա ըի
ղա , զա տէ	չա , չա ըի
թա , թա վէ	պա , պա տի
ժա , ժա մէ	ջա , ջա հի
լա , լա ցի	ռա , ռա հի
խա , խա ծի	սա , սա հի
ծա , ծա գի	վա , վա ղի
կա , կա ըի	տա , տա ցի
հա , հա ըի	բա , բա մի
ձա , ձա գէ	ցա , ցա ՚ի
ղա , զա ղի	փա , փա կէ
ճա , ճա ըի	քա , քա ըի
մա , մա ըի	ֆա , ֆա նէ

բան , բաշ , բադ , բեր , բիր , բուն .
գան , գաբ , գաս , գեր , գիր , գութ .
դաս , դատ , դար , դէտ , դիր , դուն .
զար , զատ , զան , զէն , զիս , զուր .
թադ , թաղ , թաս , թեմ , թիւ , թուղ .
ժամ , ժատ , ժար , ժեռ , ժիր , ժում .
լաց , լար , լաս , լեռ , լից , լուր .
խաչ , խաբ , խակ , խեռ , խիլ , խում .
ծամ , ծադ , ծար , ծեր , ծիլ , ծուռ .
կալ , կաժ , կահ , կեր , կիտ , կուտ .
հատ , համ , հաց , հետ , հիմ , հուր .
ձադ , ձար , ձան , ձեռ , ձիր , ձուկ .
ղատ , զամ , զար , զեկ , զիղ , զուկ .
մատ , մամ , մար , մեր , միս , մուկ .
յար , յած , յագ , յեռ , յիւ , յուղ .
նախ , նաս , նար , նեռ , նիգ , նուն .
շատ , շան , շար , շեկ , շիհ , շուք .
չափ , չար , չաչ , չեմ , չիր , չում .
պար , պատ , պաս , պէտ , պիմ , պուշ .
ջահ , ջան , ջախ , ջեր , ջին , ջուր .
ռահ , ռամ , ռատ , ռեխ , ռիմ , ռուս .
սագ , սար , սաթ , սէր , սին , սուտ .

Նաեւ անոնց ամենուն նշանակութիւնը . բայց նոցա մտադրութիւնը սրբելու եւ կարգումը զուարճալի անելու համար, օգտակար է շատ բաներուն նշանակութիւնը բացատրել տղայոց, որ բոլորովին նիւթական չլինի կարգացմանը : — Դարձեալ, ամենւին հարկաւոր է պահանջել որ տղայք հեգելու ժամանակ ասեն, աչր դատ՝ աղ, իեի մեհ, իմ, ո շիւն ըե՝ ուր, եւ այն, հապա պետք է պարզ կարգան վրայէն մէկ արտասանութեամբ, աղ, իմ, ուր, եւ այն :

(1) Տառերը կապել կամ վանկերը հեգել սովորեցնելու կրթութիւնը անելու ժամանակ հարկ է պահանջել որ տղայք գիտնան կամ սովորին



վատ , վախ , վաղ , վեր , վիթ , վուղ .
 տար , տաս , տաք , տէգ , տիղ , տուր .
 րամ , րար , րաճ , րեր , րիբ , րուք .
 ցաւ , ցաս , ցաճ , ցեճ , ցիր , ցուպ .
 փակ , փառ , փատ , փեղ , փիղ , փուտ .
 քաջ , քար , քաշ , քեղ , քիթ , քուր .
 ֆան , ֆար , ֆաս , ֆէռ , ֆիկ , ֆուր .

այ , ոյ .

բայց , գայլ , խոյր , լայր , կայք , հայք , մայր , լայն .
 բոյն , բոյս , գոյն , գոյս , գոյն , խոյղ .
 լոյս , կոյր , կոյտ , կոյս , հոյն , հոյլ .
 զոյս , ճոյս , մոյն , յոյս , նոյշ , շոյս .
 պոյտ , պոյտ , բոյր , քոյր ⁽¹⁾ .

ւ , իւ .

բաւ , գաւ , թիւ , ծիւ , տիւ .
 բիւր , գիւր , թիւր , թիւն , ժիւն , լիւն , ձիւն .
 ճիւն , պիւն , սիւն , տիւն , բիւն , քիւն ⁽²⁾ .

(1) Յ տառին հնչումը առանձին դատով սովորեցնելու է տղայոց , այսինքն թէ կնչպէս կհնչուի բառի սկիզբը , յագ , յետոյ , յաշտակեմ եւ այլն , կես նոյի պէս . բառերուն մէջը՝ կես ինի պէս , զոր օրինակ , բայց , այգ , յոյս . եւ բառերուն վերջը՝ անձանց , զոր օրինակ գայ , տայ , մնայ , եւ այլն :

(2) Ի ու վ տառերուն հնչման զանազանութիւնը լաւ պէտք է հասկըցնէ վարժապետը տղայոց , մանաւանդ այն բառերուն մէջ որ ւ

ՄԻԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ .

աղբ , արգ , աստ .	յարգ , յարգ , յոյն .
բաղբ , բարգ , բաստ .	նարտ , ներկ , ներս .
գործ , գորտ , գիրք .	շանթ , շարք , շերտ .
դարձ , դաշտ , դիրք .	որք , ոյք , ոտք .
երգ , երթ , ենթ .	չարք , չափք , չորս .
զարգ , զարկ , զիրկ .	պարք , պարս , պէտք .
ընդ , ըստ , ըլտ .	ջանք , ջուրք , ջիւք .
թարմ , թարց , թերթ .	ռահք , ռաստ , ռիշք .
ժանկ , ժանտ , ժայռ .	սաստ , սերտ , սուրք .
իբր , իսկ , իրք .	վարք , վէրք , վիրք .
լախտ , լիրք , լերկ .	տախտ , տաշտ , տուրք .
խախտ , խայթ , խիղճ .	րամք , րաստ , ըինտ .
ծայր , ծանր , ճաք .	ցանք , ցիրգ , ցուրտ .
կարգ , կերպ , կիրք .	ւիւնք , լիւտք , լիւծք .
հարթ , հերթ , հարթ .	փայտ , փառք , փերթ .
ձայն , ձեռք , ձիրք .	քանդ , քայռ , քարտ .
զարգ , զիրթ , զորգ .	օրք , օձք , օղք .
ճարտ , ճայթ , ճիշգ .	ֆարս , ֆարտ , ֆորթ .
մարգ , մերթ , մորթ .	

տառով կվերջանան . զոր օրինակ , բաւ , դաւ , կղեւ , կրեւեցաւ , բիւ , եւ այլն , որ չհնչեն այնպէս՝ որպէս թէ գրուած լինէին վ տառով , բաւ , դաւ , կղեւ , կրեւեցաւ , բիւ :

ԲԱԶՄԱՎԱՆԿ ԱՆՈՒՆՆԵՐ.

Սբ գար	, Ս գա պի	, Ս զա ըի ա	.
Բար սեղ	, Բա գա բատ	, Բար թու զի մէ ոս.	.
Գաս պար	, Գաբ ըի էլ	, Գրի գո ըի ոս	.
Դա լիթ	, Դա նի էլ	, Դի ո նե սի ոս	.
Եփ բեմ	, Ե զի ա	, Ե բե մի ա	.
Զե նոբ	, Զո սի մոս	, Զա քա ըի ա	.
Թով մաս	, Թա դէ ոս	, Թէ ո գո բոս	.
Ին դոս	, Ի սա հակ	, Իգ նա տի ոս	.
Լե լոն	, Լու սե զէն	, Լու գո վի կոս	.
Խո ըէն	, Խա չա տուր	, Խոս ըո վի դուխտ	.
Ծե բոն	, Ծա մին դոս	, Ծաղ կա զար գիկ	.
Կիւ ըեղ	, Կի բա կոս	, Կոս տան գի ա նոս.	.
Հե բոն	, Հա ըի սի մէ	, Հա մա զաս պեան	.
Ղա զար	, Ղամ պէ ոս	, Ղե լոն գի ոս	.
Մես բոս	, Մար տի բոս	, Մեւ քի սե դեկ	.
Յա կոբ	, Յով հան նէս	, Յուս տի ա նէ	.
Ներ սէս	, Նի կե տաս	, Նեք տա ու նէ	.
Շու շան	, Շո զա կաթ	, Շա հա պի վան	.
Ոս կան	, Ով բեո աէս	, Ո նաի ըի ոս	.
Պեա բոս	, Պո զիկ տոս	, Պո զի կար պոս	.

Ռա քէլ	, Ռո մա նոս	, ը Ռըս տա կէս	.
Սար գիս	, Սո զո մոն	, Սի սի ա նոս	.
Վար դան	, Վառ վա ուէ	, Վա սի լու հի	.
Տըր գաս	, Տի բու հի	, Տի մո թէ ոս	.
Փո կաս	, Փի լիս պոս	, Փի լիկ տի մոն	.
Քե բոբ	, Քրիս տի նէ	, Օք սեն տի ոս (1)	.

(1) Երբ տղայք մինչեւ այս րազմավանկ բառերը վարժին համարձակ անսայթաք կարգալուս, վարժապետը կարող է սեւ տախտակին վրայ ուրիշ բառեր ալ գրել ու կարգացընել զատ զատ, եւ երբեմն ամենուն ի միասին, եւս եւ հրամայել որ տղայք իրենք գրեն տախտակին վրայ՝ առաջ այս բառերէն ու անուններէն մէկ քանին, յետոյ ինչ որ վարժապետը ասէ, կամ ինչ որ իրենք աշակերտները կմտածեն ու կասեն:

Այս ամենայն կրթութիւնները եմէ վեց ամիս քշեն, շատ ջէ վասն զի փորձը կվկայէ որ պէտք չէ փութալ ու մանր տղայք փութացընել կարգալուս եւ գրելու դժուար արհեստը լաւ սովորելու այնքան ժամանակէ առաջ. ապա Յէ ոչ, շատ տղայոց կարգացմունքը խիստ անկատար ու կմկրմարով կլինի եւ այնպէս կմնայ. շատն ալ իրատունք կունենան ձանձրանալու, նեղանալու, եւ կարգալ գրելը իրենց պատիժ համարելու:

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՏՂԱՅՈՅ (¹)

Ա.

ԿԱՐԳԱԼՈՒ ԳՐԵԼՈՒ ԲԱՆԵՐ.

Գիրք, թուղթ, գրիչ, տողաշար.
մատիտ, թանաք, կաղամար:

Գիրք կարգա. կարգացած գ. հասկըցիր: Ինչ որ գը-
րուեցաւ գրիչով, չհանուիր բաժով բրիչով: Թուղթ եւ
քանակ եւ զրիչ, աշխարհք շինող եւ աւերիչ:

Մատիտ մատիտ, կոշիկը ոտիդ, ճամբայ որ երթաս՝
միշտ լինին մտիդ:

Տողաշարը կարգ կանոն է, կարգ կանոնը տողաշար է.
գիրք լինի տողաշարով, գործք կարգով ու կանոնով:

(¹) Յայտնի է որ տղայք եւ ռամիկք բնական կերպով մը կսիրեն
ու դիւրաւ միտք կզանեն այն խօսքերն որ (Թէեւ առանց տաղաչա-
փութեան կանոններուն ճետեւելու) ջափով, ուրբով ու յանգով անգամ
շարուած են. եւ ահա անոր համար ըստ կարի նմանաձայն եւ նմա-
նայանգ բառերով ու խօսքերով ձեւացած են այս ընթերցարանիս դա-
սերը: — Իւրաքանչիւր դասը կարելի է երեք կամ չորս դաս բաժնել,
եւ այնպէս սովորեցնել աշակերտաց:



Առածներ.

Ա՛ սողայ, այբ ատա: — Չեմ՛ ասեր: — Ինչո՞ւ հա-
մար: — Ետեւէն բենը կուգայ, անոր համար:
— Գիրք, մէջը քաղցր միրգ:
— Թուղթ կարգա՛յտակ, կունենաս շատ ստակ:

Հանկուկ.

Գլուխս կտրեցին, սրտիկս հանեցին, գինի խմցուցին,
լեզուս բացուեցաւ, արձակ կըխօսիմ:

Բ.

Խ Ա Ղ Ա Լ Ի Ք.

Գնակ, կրօնիկ, պիլիլիկ, հոլ, կոն, հուան, խումանիկ:

Գնակն է կըս-կլորիկ, կիկը սրածայր փատիկ:
Խումանիկ խաղայ աղջիկ, տունը նստած հանդարտիկ:
Հոլը կուզէ խորագան, որ պըտոյտ գայ անխափան:
Կոնին կարմիրն է սիրուն, վաստակ է զարնողներուն:
Չուան ցատքելն օգտակար շարժմունք է սղայոց
համար:

Պիլիլիկը թելի վրայ, տըղտըղ կանէ ու ման կուգայ:

Խաղ այնպէս խաղա, ա՛ տղայ. որ չասես մեղայ:

Հանկուկ.

Քանի որ ծեծը կուտէր,
Խնտալէն սիրտը կանցնէր.
Երբոր ծեծը դադրեցաւ,
Բնկաւ գետին ու մեռաւ:

Գ.

Կ Ա Հ Կ Ա Ր Ա Ս Ի.

Սեղան, արոտ, գրասեղան. բազմոց, հայելի,
ժամացոյց, դարան:

Սեղանի վերայ կերակուր կերան, արոտի վերայ մե-
ծերը նստան:

Գիր գրեն ի գրասեղանին, շարք շարք բազմին նստա-
րանին:

Բազմոցն է հանգստարան ծերերուն. օրորոցն է թըռ-
չարան մանկիկներուն, հայելին զմայլարան գեղեցիկ-
ներուն:

Մահիճը դահիճ է աշխատասէր մարդուն:

Ժամացոյցը մարդուս կենաց կանգունն է:

Դարանին մէջ ո՞ր բաներն են թանկագին. — այն
բաներն որ միշտ հարկաւոր կլինին:

Առած.

Աւելորդ կան կարասի՛ պասնառ է շատ վրնասի:

Հանկուկ.

Չորս եղբայր մէկ գտակի տակ.
Վախեմ թէ չգտաք:

Գ.

ԿԵՐԱԿՐԵՂԷՆ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ.

Ապուր, բան, հերիսայ, ջուր, գինի, չայ, կար, մաժուր:

Պէտք է ուտես որ ապրիս. ոչ թէ ապրիս՝ որ ուտես:

Քաղցած մարդուն՝ հացէն համեղ բան չկայ:

Ապուր կեր որ շատ ապրիս:

Առածներ.

Հաց կայ, բերան չկայ. բերան կայ, հաց չկայ:

— Աղխան ունի հաց ու պանիր, գիշերը բունը ջսանիր:

Հանելուկ.

ձերմակ տակառիկ, մէջն երկու ցեղ բմպելիք:

Ե.

Հ Ա Գ Ո Ի Ս Տ.

Կապայ, շապիկ, բանկոն, մուշակ. գուրպայ, կօշիկ, գօշի, գսակ, երեսաբիչ, սաւան, լաչակ:

Կարծիր կապայ, ճերմակ շապիկ, շատ կըսիրեն մեր տեղացիք:

Գսակը կորիճին տեսք կուտայ:

Գօշին քաջութեան նշան է:

Մուշակին լաւը թեթեւն ու փափուկն է:

Առած. — Չար աղբականը կրակէ շապիկ է:

Հանելուկներ.

Ոտքի վերայ կըկենամ ու գլխի վար կըբալեմ:

— Ո՞ր բանն է որ ծայր չունի:

Զ.

Գ Ո Ր Ծ Ի Ք.

Գանակ, դգալ, պասառաֆաղ, ասեղ, մկրաս, սղոց, մանգաղ. առօր, կացին, քուր, մաղ, ուրագ:

Պասառաֆաղ, դգալ, դանակ, սեղանի հարկաւոր են ամէն ժամանակ:

Ասեղով կար կըկարեն, մկրասով լաթ կըձեւեն:

Առօր կըհերկէ, մանգաղը կըհնձէ:

Կացինով փայտ կըկտորեն, մաղով ալիւր կըմաղեն, ուրագով գամ կըզարնեն, քով չարերը կըջարգեն:

Առածներ.

Աշխարհս դանակ, ես մին դանակ. (սգան, անխիղճ մարդոց առակ):

— Գործին գործէ, գործողն պարծի:

— Անսառի ծառերը կացինին դեմ զանգաթի էլան:

Մեջերէն մեկը պասալստնեց. « Կորը մեզնէ է՝ եղբարք »:

Կամայ ակամայ հանդարեցան:

Հանելուկներ.

Բարեւ կուտայ, բարեւ կուտայ. կըպառկի կըբընանայ:

— Նայիս՝ ամանը նոր է, բոլորովին ծակ ծակ է:

— Աչք չունի, ականջ չունի, բայց կոյրերուն կառաջնորդէ:

Է.

ՇԷՆՔ, ՆԱԻ, ԿԱՌՔ.

Տուն, դպրատուն, եկեղեցի. պալատ, ախոռ, շենամարան. նաւ, շոգեմաւ, սայլ, ջրաղացք, օրեւան:

Եկեղեցին Աստուծոյ տունն է:

Լաւ տանուտէրը տունը պարտա կը դարձնէ:

Դպրատունը բանն է յիմարին, դրախտ է խելօրին:

Առածներ.

Մարդուս անձն է լաս, ախանջն առագաստ, խելք

դէկ, բաղլը քամի, կողմնացոյցը խղմնամբ:

— Նաւը ծուած ալ երայ, նամբան շիտակ բող երայ:

— Որն կառքն որ նստի, անոր խաղը կը կանգնէ:

Հանեղուկներ.

Ոտք չունի, բայց կը քալէ. ձեռք չունի, բայց կը բռնէ.

— ամէն ելնող ու մանողին ետեւներէն կը վազէ:

— Երկու եղբայր ճեծկուեցան, ճերմակ արեամբ ներկուեցան:

— Երկու եղբարք առջեւէն կտորը կտորը կը վազեն. երկուքն ալ ետեւներէն, բայց չեն հասնիր. որո՞նք են:

— Թեւերը կը շարժէ, Թռչիլ երթալ կարող չէ:



Ը.

ԸՆՏԱՆԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ.

Ձի, կով, եզ, խոզ, ոջլսար, այծ, կասու, ուղս:

Ձրի ձիուն առամները չեն նայիր:

Մէկ կովը երկու տուն կը պահէ:

Շուն շուն, ինչո՞ւ կը հաջեա: — Գայլերուն երկիւղ կուտամ: — Պոչդ ինչո՞ւ սըխմեր ես: — Գայլերէն կը վախենամ:

Ուղիս հարցուցին. վիզդ ինչո՞ւ է ծուռ: Պատասխանեց. որ տեղս է շիտակ՝ որ վիզս չի ինի ծուռ:

Խոզն աղտեղատէր, կասուն մաքրատէր, շունը տիրատէր, եզը մարդատէր:

Առած.

Իշուն հարսնիք ձայն տուր եմ: Ասեր է եզ. կամ փայտերնին պակասեր է, կամ ջրերնին:

Հանեղուկներ.

Ձորս կոխիչ, չորս կախիչ, երկու խշտիչ, մէկ տըմպտըմպիչ:

— Նստած էին երեք կատու, ամէն մէկուն դիմացը երկու կատու. քանի՞ էին ամէնքը:



Թ.

ՎԱՅՐԻ ԳԱԶԱՆՆԵՐ.

Գալլ, նապաստակ, արջ, առիծ. աղուէս, եղ-
նիկ, եղջերու. վագր, ընձառիւծ, փիղ, ռնգեղջիւր:

Գայլը գառանց թշնամի, արջը կոպիտ կենդանի.
նապաստակը վախկոտ մարդու օրինակ, աղուէսը նեն-
գաւորի:

Առածներ.

Արջը իւր ձագը ուտել որ ուզէ, առաջ ցեխի մէջ
կըթնթիւէ կասեն:

Արջը հաւկիթ ածեր է կասեն, իրան է: — Արջը
անճոռնի կենդանի մի է, եղբայր. ածեր է նէ՛ ա-
ծեր է:

Թշնամիդ թէ մրջիւնի չափ լինի, միտքդ դիր
թէ փղի չափ է, եւ զգուշացիր:

Հաներուկ.

Շէնք մի ունիմ բարձր ու շարժուն,
ներքեւն ունի չորս հատ հատ սիւն.
Գուռ մի փոքրիկ՝ նեղ գալարուն,
Վըրան շքեղ մի վերնատուն:

Ժ.

Թ Ռ Չ Ո Ի Ն Ն Ե Ր .

Հաւ, ախաղաղ, կկու, կախաւ. ննդուկ, արծիւ,
բագէ, ագուաւ. ուրուր, սագ, աղանի, կարապ,
կոունկ, բաղ, հրնդկահաւ:

Սագը կատէ, սնու, գող եկաւ. հնդկահաւը, ըղնդ
կասես. աքաղաղը՝ գողն է երկն. բագը, վնիս վախ, ա-
ռաւ տարնաւ. հաւը՝ թէ դուք մի վախենաք, կըզը-
նանք կըզընանք:

Առածներ.

Օձի պես խորագէ եղիք, աղանիի պես միամիտ եղիք:

— Հաւը ջուր կըխսմէ, եկիմ կընայի:

— Երկու ախոր մեկ աղբիւսի վրայ չեն խօսիր:

— Ագուաին հարցուցեր են քե գեղեցիկն ճվ է. պասալսան
սուեր է քե իմ ձագուկներս:

— Կերակրէ ագուար, առից կցեղու պէտ կլինի:

Հաներուկներ.

Հարիւր հատ սագ կըթըռչէին,

Հարիւրէն մէկը զարկին.

Քանի՞ հատը մընացին:

— Նա կարմիր հագնի վարտիք,

Ու խայտուժատ ունի շապիկ.

Քոլորի՛ զինչ ըզկըծիկ,

Կըռիւ առնէ զետ զարապիկ:

ԺԱ.

ՁԵՌՈՒՆՆԵՐ ԵՒ ՍՈՂՈՒՆՆԵՐ.

Օձ, ձուկ, կարիճ, որդ, մեղու. նանն, քիթեռնիկ, ննի, լու :

Օձը կըֆըշայ, ձուկը կըլողայ, որդը կըսողայ, նաննը կըբըզզայ, կարիճը կըխայթէ, յուն արիւն կըծըծէ, քիթեռնիկը կըթըռչըտի, մեղրուն մեղր ու մամ կուտայ.

Առածներ.

- ձանճը բան չէ, սիրտ կըխառնէ :
- Մեղուն դառն ծաղկէն ալ մեղր կըքաղէ :
- Ցեցը հագուստին, հոգը մարգուս սրտին :
- Մըջիւն չի կոխեր, մարգիկ կըկախէ :

Հաներուկներ.

- Կարի տեսայ ես շատ կարւան
 Որ կուիջնէր ի Խորասան.
 Իշուին բոկիկ էր ւանփալան,
 Մէկիկ հատիկ բառնան ու գան :
- Թռչուն մի կայր խիստ սիրուկ
 Ջայնը գիւ ու բարակուկ.
 Ով որ զինքը մեռցընէր,
 Մարդու արիւն կըվոթէր :
 - Ո՞վ է այն որ մեր գլխէն վեր
 գլխիվայր կըպըտըտի :

ԺԲ.

Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր.

Վարդ, մանուշակ, շուշան, մեխակ, շահոխամ, յակիներ, տուր :

Վարդը ծաղկանց թաղուհի. մանուշակը խոնարհու թեան օրինակ, շուշանը մաքրութեան սրտի :

Առածներ.

- Վարդը անփուռ զլինիւր, սերը անվիտ զլինիւր :
- Գաւթի ծաղիկ մի հասարակ՝ անուշահոտ էր քանց մեխակ. հարցին, ուսի՛ հոսդ անուշակ. ասաց, բնկերս էր մանուշակ :

Հաներուկ.

Գոյնըզգոյն աստղեր, երկնային հիւրեր, քաղցրիկ բաժակներ, պըտղոց պըսակներ :

ԺԳ.

Պ Տ Ո Ւ Ղ Ն Ե Ր .

Խաղող, ծիրան, սանձ, դեղձ, խնձոր . կաղին,
ընկոյզ, նուշ, բուզ, սալոր :

Խաղողն է աղնիւ պտուղ . խնձորը պտղոց թագաւոր-
սանձ, դեղձ, ծիրան, մէկը միւսէն պատուական, առատ
են ի Հայաստան :

Միթէ կարելի է փուշերէն խաղող քաղել, կամ
տատասկէն թուղ ժողովել :

Բարի ծառը բարի պտուղ կը բերէ, չար ծառը
չար պտուղ կը բերէ :

Առածներ.

- Ես գանձ կասեմ, նա սանձ կասէ :
- Խնձորին լաւերը արջերը կուտեն :

Հանեղուկներ.

- Զարմանք ասեմ քեզ, սիրելի .
- Կին մի ծընաւ գըռուզ որդի .
- Տըղայն ունի ալիք ծերի,
- Երբ ծերանայ՝ դառնայ սելի :
- Է նա կանաչ կոճակ բոլոր,
- Անպակ գինով լըցած տըկճոր .
- Կարմիր մեղուք ի ներս աղուոր .
- Եղբայր, դու կեր զինչ մեղրի ծոր :

ԺԴ.

Մ Ե Տ Ա Ղ Ն Ե Ր .

Ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ . կապար, անագ,
սնդիկ, պողպատ :

Ոսկին երկաթով կը հանեն :

Երկաթը ժանկէն կմաշուի, մարդուս սիրտը
տրամու թենէն :

Երկաթը հնոցին մէջ կը հալի :

Երկաթը քանի որ տաք է կը ծեծեն :

Ոսկին լեզու չունի, բայց շատ լեզուներ կը-
շարժէ ու կը կապէ :

Ասաց ոսկին . իմս է իմըս ամէն բան .

Ասաց պողպատն, իմս է իմըս ամէն բան .

Ոսկին՝ թէ ես ծախու կառնում ամէն բան,

Պողպատը թէ բըռնի կառնում ամէն բան :

Հանեղուկներ.

- Երկու եղբայր խիստ փնտրուեա՞ծ,
- Երկուքն ալ մէկ մօրէ ծընած .
- Մեծին փոքր է պատիւն ու գին .
- Փոքրը յարգի ու Թանկագին :
- Պըզտիկ է, կըլտիկ է,
- Մէկ բանտէն կելլէ, միւսը կըմըտնէ,
- Բոլոր աշխարհըս ման կուգայ,
- Մէկ բանի պիտուական չէ,
- Բայց ամենուն հարկաւոր է :

ԺԷ.

ՏԱՐԻՈՅՆ ԱՄԻՍՆԵՐԸ.

Յունուար, փետրուար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր :

Հայոց ամիսները . Նաւասարդ, հոռի, սահմի, սրէ, փաղոց, արաց, մեհեկան, արեգ, ահեկան, մարերի, մարգաց, հրոսից, աւելեաց :

Յունուարի 1-ն է Կաղանդ, 6-ը Ծնունդ, վերջը ճիւնաքանդ :

Փետրուարի 14-ին Տեառնընդառաջ է :

Մարտի 5-ին կը վերջանայ պառուս ցուրտ, 9-ին գարնանամուտ է :

Ապրիլի մէջը զատիկ, կը բացուի գարնան ծաղիկ : Մայիս, ցանկալի ամիս, երանի թէ երբէք չանցնիս : Յունիս, կեռասի ամիս :

Յուլիս, վարդավառի ամիս :

Օգոստոսի կէսերուն Ատտուածածնի կուգայ օծն :

Սեպտեմբեր, կը հասուննան պտուղներ :

Հոկտեմբեր, Ատտուած անէ արգիւնաբեր :

Նոյեմբեր, աշունը կանցնի, կը սկսի ձըմեռ :

Դեկտեմբեր, ցուրտ սառնամանիք, ամէն տարի բարով հասնիք :

Հանկուկներ.

Ծերունի մի կայր մօրուօք փառաւոր, Տասուերկու որդիք չորս դին պարաւոր . Ոմանք ծաղկազարդ, ոմանք պտղազարդ, Որն երիտասարդ, որը ալեւոր :

— Ջըմեռը տաքցաւ, գարնան փտեցաւ, ամառը մեռաւ, աշնան նորէն կենդանացաւ :

ԺԸ.

ԳԼԽԱՆՈՐ ՏՕՆԵՐ.

Կաղանդ, Ծնունդ, Տեառնընդառաջ, Բարեկենդան, Աւագ շաբաթ, Աւետում, Զատիկ, Համբարձում, Հոգեգալուս, Վարդավառ, Վերափոխում, Խաչվերաց :

Կաղանդ, Յունուարի 1-ին, շնորհաւոր նոր տարի . Ծնունդ, Յունուարի 6-ին, շնորհաւոր ծնունդ եւ յայտնութիւն :

Տեառնընդառաջ, փետրուարի 14-ին, Սիմէոն ծերունի :

Աւետում, Ապրիլի 7-ին :

Զատիկ, Մարտի վերջերուն կամ Ապրիլի մէջ :

Համբարձում, վիճակ . Զատիկէն 40 օր յետոյ :

Հոգեգալուստ, Պենտեկոստէ . Զատիկէն 50 օր յետոյ :

Վարդավառ, Յուլիսի առաջին կիրակին :

Վերափոխում, Աստուածածին, Օգոստոսի 15-ին
մօտ կիրակին :

Խաչվերաց, Մեծ Խաչ, Սեպտեմբերի 14-ին մօտ
կիրակին :

Առածներ.

Աւխտէ լուր օրերուն, համը կտոնուտ տօն օրերուն :
— Ծուլին ու յիմարին համար ամեն օր տօն է :

ԺԹ.

ՄԱՍՈՒՆՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՅ.

Գլուխ, վիզ, ուս, քիկունք. քեւ, ձեռք, մաս,
սրունք. մէջք, կող, ոտք, ըզունկ :

Գլխին սուրբ, վզին հասար : ուսերունց ցածը, թի-
կունքին կուզը՝ յարգի չեն :

Առածներ.

Մէկ ձեռքը ձայն չհաներ :
— Ձեռքը հինգ մաս ունի, հինգն ալ իբարու հաւասար չեն :
— Գլուխը բող ջասէ ոտքին՝ քե ինձ հարկաւոր չես :

Հաներակներ.

Չորս մայր կային նրմանակ,
Ունէին հինգ հինգ զաւակ :

Հինգը մէկ մօր էին որդիք,
Հինգը անոնց եղբորորդիք,
Տասն ալ մօրեղբօր որդիք :
— Մէկը կեցեր կըլսօսի, երկուքը մըտիկ կանեն,
եւ երկուքը կընային :

Ի.

ՀԱՍՍԿ ՄԱՐԴՈՅ.

Տղայ, մանուկ, պասանի. երիտասարդ, այր,
ծերունի :

Տղայն տղայ է, մինչեւ եօթը տարին : — Տղուն
հեար մեծի պէս վարուէ :

Եօթը տարեկանէն մինչեւ տասներջորսը մանուկ է.
լաւ կրթութեան տանն է :

Տասներջորսէն մինչեւ քսանմէկը պատանի. ապա-
գայն գրեթէ կորոշուի :

Քսանմէկէն երեսունըհինգ՝ երիտասարդ է, ե-
ռանդը շատ, գործունէութիւնը մեծ, հաստատուն
գործ կըբռնէ :

Երեսունըհինգէն մինչեւ յիսուն՝ այր կատարեալ
կհամարուի. ուրիշներն ալ կառավարել կարող է :

Յիսունէն անդին ծեր է. ծերութիւնը սահման
չունի, բայց պատիւը շատ մեծ է՝ եթէ արժանաւո-
րութիւն ունի :

ԻԱ.

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի.

Սեղան, խորան, ընծայարան. սկիհ, մաղզկայ, աւեսարան. խաչ, պատկեր, բուրվառ, կերոն. սաղաւարտ, Բոց, աւազան:

Եկեղեցին Աստուծոյ տունն է. սեղանին վրայ սուրբ պատարագ կըմատուցանեն. խորանը սեղանին կեցած տեղն է:

Ընծայարանին մէջ սուրբ սպասը կըպատրաստուի. Սկիհն ու մաղզկան անօթք են պատարագի:

Աւեսարանը վարդապետութիւնն է Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Խաչը նշան է Քրիստոսի եւ քրիստոնէի. անով կըկրնքեմք զմեզ ու կասեմք. Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Սուրբ եւ օծուած պատկերները կըյարգեմք ու կըմեծարեմք:

Բուրվառով խնկարկութիւն կանեն՝ ի վառս Աստուծոյ եւ ի նշան ջերմեռանդն ազօթից:

Կերոն եւ ուրիշ մոմեր կըվառեմք ի նշան լոյս հաւատոյ եւ ի պայծառութիւն հանդիսից աստուածպաշտութեան:

Սաղաւարտը ժամարար քահանային գլխու զարդն է Քոյցը օրինակ է քառակերպեան քերովբէից որ յաներեւոյթս կսպասաւորեն սուրբ սեղանոյն:

Աւազանը մկրտարանն է քրիստոնէից:

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն, Տէր Յիսուս, յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամսս լուսաւորս. յայնժամ մեք մի ամաչեսցուք՝ յուսացեալքս ի քեզ. այլ զօրութեամբ քով մեծաւ բերկրեսցուք ընդ աջմէքումմէ որպէս որդիս լուսոյ եւ որդիս տուրնջեան:

ԻԲ.

Ա Ղ Օ Թ Ք.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ սուր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր՝ որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի ամենիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւեկեաց եւ աներեւութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այս ինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ եւ սն յարարած, նոյն ինքն ի բնութենէ Հօր. որով ամե-

նայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղաքս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան՝ իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով: Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ առուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ չօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք չօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի սուրբ Հոգին յանեղն եւ ի կատարեալն: որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարդարէս եւ յաւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոյեաց զառաքեալն եւ բնակեցաւ ի սուրբսն: — Հաւատամք եւ ի մի միայն յընդհանրական եւ յառաքելական եկեղեցի, Ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն. ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանս յաւիտենից Հոգւոց եւ մարմնոց. Յարքայութիւն երկնից եւ ի կեանն յաւիտենականս:

Իսկ որք ասենն, էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ Հոգին. կամ թէ՛ յօչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ՝ եւ կամ զսուրբ Հոգին. եւ թէ փոփոխելի են կամ այլայլելի, զայնպիսիսն նղովէ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի:

Իսկ մեր փառաւորեցուք որ յառաջ քան զյաւիտեանս. երկիրպագանելով սրբոյ երրորդութեանն եւ միոյ Աստուածութեան չօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ. (երեխ ակգաւ), Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատն զաղաչանս մեր՝ Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ:

Հալածեա ի մէնջ Տէր, նշանաւ խաչի քո զընդդիմամարտ եւ զաներեւոյթ գազանն, եւ մի տար յապականութիւն զքո ժառանգութիւնս:

Անկանխմք առաջի քո Աստուածածին եւ աղաչեմք զանարատ զկոյտք. բարեխօսեա վասն անձանց մերոց. եւ աղաչեա զմիածին օրդիդ՝ փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Աչք ամենեցուն ի քեզ յուսան՝ Տէր, եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու:

Կերակրիչ եւ ուրախարար Տէր, փառք քեզ. լցուցանող Քրիստոս, գոհանամք զքէն:

ԱՌԱՒՈՏԵԱՆ ՄՂՕԹՔ.

Փառք ըստեղծողիս
Որ քուն անուշիկ
Տըլաւ իմ աչքիս,
Արթընցուց այժմիկ :

Կարմիր արեւը
Ծագեց իմ վըրաս,
Քաղցրիկ բարեւը
Կուտայ ինձ մամաս :

Հայրիկս համբուրիւ
Կառնու զիս գիրիը,
Ինչպէս որ հովիւ
Գըգուէ գառնիկը :

Ատուած իմ եւ Տէր,
Մինչեւ այս կէտին
Դու ես պատրաստեր
Իմ ամէն բարին :

Տուր որ անմեղուկ
Մընամ մըշտական,
Ամենուն սիրուկ,
Քեզ հաճոյական :

ԵՐԵՎՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ.

Տէր Աստուած իմ, Տէր բարերար,
Դու պահպանէ զիս այս գիշեր.
Տուր հօրըս մօրըս կեանք երկար,
Հանգըստութիւն ու լաւ օրեր :

Քու սուրբ հրեշտակըդ մեր քովէն
Չըհեռանայ ամենեւին .

Պահէ ըզմեզ փորձանքներէն,
Չարթեցընէ զըւարթագին :

ԱՂՕԹՔ ՏՂԱՅՈՅ.

Հայր մեր երկնաւոր,
Հայր հասարակաց,
Ինձ ալ ամէն օր
Բարիքըդ կուտաս .
Կեանք, լոյս, կերակուր,
Հայր ու քաղցրիկ մայր,
Մե՞ծ ու փոքրիկ քոյր,
Անուշիկ եղբայր,
Իսկ ես ինչ ունիմ
Որ ինչ տամ քեզի .
Առջեւըդ ընկնիմ,
Կենամ ազօթքի .

Շնորհքըդ տուր ինձի
Որ իմ ծընողաց
Լինիմ սիրելի,
Քեզ հաճոյ, Աստուած:



ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՐԵՎԱՆԻՆ ԱՌ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿՆ.

Հրեշտակ զուարթուն,
Հըզօր պահապան մեր,
Որ զտիւն ողջոյն
Ըզմեզ խնամեցեր.
Ի մուսս արիւնոյն
Դու լոյս անըսուեր ես մեր.
Անմուտ արեւ
Կացցես մեզ յայս գիշեր:
Քուն քաղցր անխորձ
Շնորհեա ի փառս Աստուծոյ
Եւ զծընողս հոգւոց եւ մարմնոց կեցո:



ԽՐԱՏԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ.

Աստուած ամէն բան կրտսնէ,
Ամէն տեղ է ու չըխաբուիր.
Ծածկագէտ է ու սըրտագէտ,
Իրմէ բան մի չըծածկուիր:



Իմաստուն զաւակը ցընծութիւն է հօրը,
Անիմաստ զաւակը տրտմութիւն է մօրը:



Մի խընդրեր յԱստուծոյ
Ոչ պատիւ՝ ոչ ըստակ,
Այլ ըզքեզ կըրթելոյ
Խելք՝ շընորհք, սիրտ յըստակ:



Լեր օգնական ընկերաց,
Աղքատին սէր՝ գութ ցուցուր.
Տէրըն կասէ, չէ անվարձ
Եւ ոչ գաւաթ մը պաղ ջուր:



Մի խաբեր զուրիշը, ոչ երբէք սուտ ասա,
Ոչ իբրեւ կատակով, ոչ իբրեւ սուտ վըկայ:



Թէ բաղբաւոր լինի մարդըս՝ թէ դըժբաղդ,
 Միշտ է կարօտ ուրիշներու օգնութեան .
 Ով որ իրեն միայն կապրի՝ է կէս մարդ,
 Արժանի չէ անդամ ասուիլ մարդկութեան :

Ջանք, ժամանակ, համբերութիւն
 Ամէն բանի տան յաղթութիւն .
 Ով ինչ ուզէ կըրնայ անել
 Եթէ չանէ անհոգութիւն :


Մի պարծենար որ գիտուն ես .
 Որքան սովրիս՝ քիչ բան գիտես .
 Միայն յիմար մարգն է հըպարա .
 Խելօքն է միշտ խոնարհ եւ հեզ :

Շատ բարձրացար, կըխոնարհիս .
 Օրէնք դարձած է աշխարհիս .
 Խոնարհեցար, կըբարձրանաս
 Թէ յայն կեանքը եւ թէ յաստիս :

Աստուած է քու ստեղծողը, քու բարերարդ ու հայրը .
 Զինքը պաշտէ սրբութեամբ, սիրէ բոլոր սըրտովդ :
 Հօրքդ մօրքդ պատիւ աուր, եւ իշխանաց յարգութիւն .
 Հնազանդ եղիր օրինաց, եկեղեցոյ կարգերուն :
 Ինչ որ քեզի չես կամիր, դուն ալ այլոց մի՛ աներ .
 Ի՛նչ լաւութիւն քեզ ցանկայ, Թող վայլեն եւ ուրիշներ :

Բաղաքավար, մարդասէր, բաղցըր վարմունք ունեցիր,
 Ձեռքէդ եկած լաւութիւնն ամենեցուն ի գործ դիր :
 Սիրէ ազգդ ու հայրենիք՝ յորում ծընար եւ սընար,
 Պատրաստ եղիր Թափելու եւ արիւնդ անոր համար :
 Հաւատարիմ բարեկամն իրաւ է որ գին չունի,
 Երբ քեզ անձին պէս սիրէ, ունեղ ատենիդ հասնի :
 Փախիր ի չար ընկերաց ու հետեւէ լաւերուն,
 Անտես արա ըստ կարի ուրիշներու պակսութիւն :
 Ներողամիտ, սըրտացաւ, գըթած եղիր խեղճերուն,
 Միայն ընդդէմ քու անձիդ խստապահանջ աննըկուն :
 Սիրէ լըսել ամենէն խելք սովրելու խըրատներ,
 Բայց դուն երկար շատ խօսիլ ամենեւին մի՛ սիրեր :
 Մըտքէդ անցածը քննէ, չափ դիր սըրտիդ ուզածին,
 Բերնէդ խօսք մը չըհանած՝ մըտքով կշռէ առանձին :
 Մի՛ հետեւիր աւելորդ զարդարանքի՝ հագուստի,
 Նայէ որ միտքդ ու հոգիդ իմաստութեամբ զարդարուի :
 Վաստակըդ տես որ լինի արդարութեամբ շահաւետ,
 Ծախքըդ անոր համեմատ, ոչ աւելորդ եւ անպէտ :
 Ամէն տեսակ սըտութեան դէմ դուն եղիր Թըշնամի,
 Եւ քու կողմէդ միշտ փախիր սուտ ասելէն ուրիշի :
 Խոհեմ ու փորձ լաւ մարդոց խորհուրդ հարցուր համարձակ,
 Եւ նոցա խրատը պահէ, գործըդ լինի յաջողակ :
 Ինչ որ հասուն խորհրդով որոշեցիր՝ կտտարէ,
 Բայց յամառեալ մի՛ կենար՝ երբ ասեն՝ ծուռ կամ չար է :
 Թէ կարծիքըդ հարկ լինի պընդել՝ պընդէ, բայց մեղմով,
 Իսկ Թէ փոխել ըստիպուիս, փոխէ սիրով՝ պատճառով :

Առաւօտուն կանուխ ել,
 Մի ծուլանար, շուտ հագուէ,
 Մաքուր լրա երեսըդ,
 Սրբըլէ ու սանտրբուէ:
 Յետոյ կեցիր ազօթքի,
 Սըրտանց փառք տուր Աստուծոյ,
 Որ կը պահէ միշտ ըզքեզ
 Յախտից հոգւոյ եւ մարմնոյ:
 Շատ քրնանալը լաւ չէ,
 Համարներըդ կը մոռնաս.
 Գիրքը ձեռք առ ու քաղէ
 Որ դասըդ շուտ սովբենաս:
 Ահա զանգակ կը զարնեն.
 Գըրքերըդ լաւ ժողվումէ,
 Գըրիչ թանաք թուղթ մատիտ
 Միշտ առաջուց պատրաստէ:
 Ամէն բանի տեղ պէտք է.
 Բան չունենաս ցիր ու ցան.
 Տեղէն առիր, տեղը դիր,
 Տեղը կենայ ամէն բան:
 Դասարանին մէջ պարապ
 Ամենեւին մի կենար.
 Պարապ կեցող տըղայոց
 Գըլուխը բան չի մընար:
 Նոր բան մը որ լըսեցիր՝
 Տետրակիդ մէջը գրբէ.
 Էջածներըդ թէ մոռնաս՝
 Գըրածըդ միտք կը բերէ:



Ա Ռ Ա Կ Ն Ե Ր

ՈՍԿԻ ՀԱՒԿԵԹ.

Ատենով ծերուկ մը կար,
 Ծերուկին հետ պառաւ մը կար.
 Բուրուլիով հաւ ունէին,
 Հաւկիթ ածեց իրենց համար.
 Բայց հասարակ հաւկիթ չէր,
 Հապա ոսկի հաւկիթ էր.
 Ծերուկը առաւ զարկաւ,
 Ոսկին կոտրել չը կըրցաւ.
 Պառաւն առաւ՝ զարկաւ զարկաւ,
 Նա ալ կոտրել չը կըրցաւ:
 Յանկարծ մուկ մը ելաւ ծակէն,
 Գովէն անցաւ ցատքը տեղէն,
 Զարկաւ պոչովը հաւկը թին,
 Հաւկիթն իսկոյն ընկաւ գետին
 Ու կոտրեցաւ Զարգըւեցաւ,
 Դեզին ձերմակ դուրս թափեցաւ:
 Ծերուկը կուլար,
 Պառաւը կուլար,
 Հաւն անդիէն՝ կրփղսնսփ
 Կտնչեց, հարկի մարիկ՝ մի լաք.
 Ես ձեզ ուրիշ կածեմ հաւկիթ,
 Ոչ ոսկի սուտ, այլ ճըշմարիտ:



ԳԵՂԱՅԻՈՅՆ ԵՐԱԶԸ.

Գեղացւոյն մէկը գիշերն յերազին
Մախոխ կըտեսնէ, այն ալ ազնաց քին.

Մեծ ու լիք էր պընակը.

Բայց արի տես փորձանքը.

Խեղճը գըգալ չունէր ձեռքը

Որ մախոխին մըտնէր կողքը.

Կարթըննայ՝ կելլէ տեղէն,

Դըգալ մը կառնու գարակէն,

Կըպառկի քուն կըլլայ նորէն.

Բայց երազը ո՛ւր մընաց.

Մախոխ տըւող չեղաւ իրեն:

ԱՅՄՆ ՈՒ ԳԱՅԼԸ.

Մէկը կար՝ մէկը չկար, երկայնմօրուք այծիկ մը
կար: Այս այծը անտառին մէջ իրեն համար խուզ
մը շինեց. մէջը ուլիկներ՝ այսինքն ձագեր բերու.
անոնց առաւօտ ու իրիկուն կաթ կուտար, ու ցորեկը
կելլէր կերթար արօտ արծելու: Բայց անէն ելած
ժամանակը կապուպէր ուլիկներուն որ ներսը խելօք
կենան, դուռը ամուր փակ պահէն, իրմէ զատ ո՛վ ալ
գայ՝ դուռը զարնէ, չբանան: Մէկ իրիկուն մը այծը
տուն կըգառնայ, կօտօշներովը կըզարնէ գրան ու
այսպէս կըկանչէ.

Ուլիկներըս, ձագիկներըս,

Իմ աչքի լուսիկներըս,

Բացէք դուռը, շուտ արէք.

Ձեր մարիկը ներս առէք,

Ձեր մարիկը եկեր է,

Ձեզի կաթիկ բերեր է.

Կանանչ արօտ արծեր է,

Պաղուկ ջրբեր խըմեր է,

Ահա կաթը կըվազէ,

Մինչեւ կոճին հասեր է,

Կոճէն կիջնայ կըճղակին,

Թաց գետինը կըծըծէ:

Ուլերը ճանչցան իրենց մօրը ձայնը, գնացին
գուռը բացին. այծը կաթ տուաւ անոնց, յետոյ նո-
րէն ելաւ գնաց արծելու:

Գայլուն մէկը մօտիկ տեղ պահուր ած է եղեր.
կըլըտէ ասածները. նա արօտի երթալուն պէս՝ կը-
մօտենայ խղին գրանն ու խուպոտ ձայնովը կասէ.

Ձագուկներըս, մանուկներըս,

Բացէք դուռը՝ հագուկներըս,

Ձեր մարիկը ահա եկաւ,

Ձեզի անուշ կաթիկ բերաւ . . .

Ուլերը մտիկ կանեն, կընային որ իրենց մօրը ձայնը
չէ. խեցինք լսեցինք, կպատասխանեն ներսէն. այդ-
մեր մօրը ձայնը չէ. ու չեն բանար դուռը: Գայլը
խաղք եղած՝ դօս դօս կգառնայ կերթայ իրեն տեղը:

Երբոր մայրը տուն կուգայ, ուլերը կպատմեն ե-
ղածը. այծը շատ կուրախանայ ու կասէ. Ապրիք մը-

նաք՝ զաւակներս . շատ լաւ արիք որ դուռը չբացիք .
նա գայլ ասուած գազանն էր . նորա միաքը ձեզի
կաթ կերցընել չէր , զձեզ սղջ սղջ ուտել էր :

Բ Ա Ն Ճ Ա Ր .

Պապին տընկեց բանճարը , բանեցուց ամէն ճարը ,
ջրբեց , հոգաց , խընամեց , ցուցուց իրեն հանճարը :
Բանճարը մեծցաւ աճեցաւ , ուռեցաւ ու տըկուե-
ցաւ . պապին քաշեց բանճարը , քաշել հանել չը-
կըրցաւ :

Պապին կանչեց մամիին . մամին բռնեց պապիէն ,
պապին բռնեց բանճարը , քաշեցին քաշեցին , քաշել
հանել չըկըրցին :

Մամին կանչեց մանկիկին . մանկիկը բռնեց մա-
միէն , մամին պապիէն , պապին բանճարէն , քաշեցին
քաշեցին , քաշել հանել չըկըրցին :

Մամուկը կանչեց մուկին . մուկը բռնեց մամուկէն ,
մամուկը մանկիկէն , մանկիկը մամիէն , մամին պա-
պիէն , պապին բանճարէն , քաշեցին քաշեցին , քա-
շել հանել չըկըրցին :

Մուկը կանչեց մոծակին . մոծակը բռնեց մուկէն ,
մուկը մամուկէն , մամուկը մանկիկէն , մանկիկը մա-
միէն , մամին պապիէն , պապին բանճարէն , քաշեցին
քաշեցին , հանեցին գուրս ձըգեցին , իրենք ալ կըռ-
նըկի վրայ զարնըւեցան ընկան գետին :

Լ Ա Ի Ն Ո Ւ Վ Ա Տ Ը .

Երկու գեղացիք իրարու հանդիպեցան : « Բարի
լոյս՝ աղբար : — Աստուծոյ բարին քեզ : — Ուստի կու-
գաս : — Հեռու տեղէ : — Ո՞ր քաղաքէն : — Էրզիւրիւ-
մէն : — Էրզիւրիւմը մեծ քաղաք է : — Չչափեցի : —
Փողը շատ է : — Չհամրեցի : — Հապա ինչո՞ւ գնացիր
հոն : — Բան ման առնելու . մէկ լիտր սոխ գնեցի : —
Ահա այդ լաւ ես արած : — Կաւը լաւ է , բայց այն-
քան չէ : — Ինչո՞ւ համար : — Հապա սոխը ճամբուն
վրայ թափեցաւ : — Այդ վատ է : — Վատը վատ է ,
բայց այնքան չէ : — Ինչո՞ւ համար : — Հապա մէկ
լիտր սոխ թափեցի , գետնէն երկու լիտր ժողվեցի : —
Ահա այդ լաւ բան է : — Կաւը լաւ է , բայց այնքան
չէ : — Ինչո՞ւ համար : — Տուն տարի տնկեցի , ցան-
ցառ ելաւ : — Այդ վատ է : — Վատը վատ է , բայց
այնքան չէ : — Ինչո՞ւ համար : — Յանցառ ելաւ , բայց
աւելի խոշոր եղաւ : — Ահա այդ լաւ է : — Կաւը լաւ
է , բայց այնքան չէ : — Ինչո՞ւ համար : — Հապա հա-
րեւանիս կովը մէջն ընկաւ , բոլորն ալ կոխկըռտեց
փճացուց : — Այդ վատ է : — Վատը վատ է , բայց
այնքան չէ : — Ինչո՞ւ համար : — Հապա կովը բըռնե-
ցի , մորթեցի , միսն ու կաշին աղեցի : — Ահա այդ
լաւ է : — Կաւը լաւ է , բայց այնքան չէ : — Ինչո՞ւ
համար : — Գեղի շները մսին վրայ ընկեր՝ առեր
տարեր են : — Ահա այդ վատ է : — Վատը վատ է ,
բայց այնքան չէ : — Ինչո՞ւ համար : — Հապա ես այն

շները սատկեցուցի, ու անոնց կաշիէն կնոջս մուշ-
տակ շինեցի: — Այդ լաւ բան է: — Կաւր լաւ է,
բայց այնքան չէ: — Ինչո՞ւ համար: — Հասկա յիմար
կնիկս այն շներուն տիրոջը գրան դիմացէն անցեր
է. տէրը ճանչցեր ու քաշեր հաներ է մուշտակը
կնոջըս կանրկէն: — Այդ վատ է: — Վատը վատ է,
բայց այնքան չէ: — Ինչո՞ւ համար: — Ես շան տի-
րոջը հետ դատաստան բացի: — Ահա այդ լաւ ես
արած: — Կաւր լաւ է, բայց այնքան չէ: — Ինչո՞ւ
համար: — Դատաստան բացի, բայց դատս կորսըն-
ցուցի: — Ի՞նչ կասես, աղբար, ահա այդ բանը վատ
է: — Վատը ի հարկէ վատ է, բայց այնքան ալ վատ
չէ որ լաւութիւն մի չունենայ:

ԲՈՆՈՒԱՄ ԹՈՉՆԻԿԸ.

ՏՂԱՅՔ.

Հա՛ թըռչնիկ մը բռնեցինք,
Եկաւ ընկաւ ցանցին մէջ.
Մի չարչարեր ինքըզ զինք,
Թըռչնիկ՝ այլ չենք թողուր քեզ:

ԹՈՉՆԻԿ.

Ա՛հ, ինձնէ ինչ օգուտ ձեզ,
Ո՛վ անմեղուկ մանկիկներ.
Թողէք թըռչիմ երթամ ես,
Քակեցէք այս չըւաններ:

ՏՂԱՅՔ.

Ո՛չ, չենք թողուր քեզ՝ թըռչնիկ.
Մեր քովիկը որ կենաս,
Շաքար կուտես անուշիկ,
Չայ պաքսիմաս կունենաս:

ԹՈՉՆԻԿ.

Ա՛հ, ես շաքար չեմ ուտեր.
Չայը սիրած բանըս չէ.
Ճանճ որ բըռնեմ ի դաշտեր,
Հունտ որ քաղեմ՝ հերիք է:

ՏՂԱՅՔ.

Ձըմեռը հոն կըսառիս,
Կըմնաս չոր ծառին մէջը.
Մեր քովիկը լաւ կապրիս
Նախշուն վանդակին մէջը:

ԹՈՉՆԻԿ.

Ո՛հ, մի վախնաք. ձըմեռներն
Ես տաք տեղեր կըթըռչիմ.
Գերութեան մէջ լոյս տեղերն
Ինձ բանտ են, ինչպէս հանգչիմ:

ՏՂԱՅՔ.

Ա՛խ թըռչունիկ, գիտնայիր
Ի՞նչպէս պիտի սիրենք քեզ,
Ի՞նչպէս միշտ՝ ամէն իժիր
Պիտի գըզուենք աղբօր պէս:

ԹՈՉՆԻԿ.

Կըհաւատամ, մանկիկներ,
Բայց վընաս է ինձ սէրն այն.
Գիտեմ որ այս իմ աչքեր
Շուտ կըփակուին կըմընան:

ՏՂԱՅՔ.

Իրաւ է՝ թըռչնիկ, իրաւ,
Չես գիմանար գերութեան.
Ուրեմըն երթաս բարեաւ,
Վայելէ յազատութեան:

ԱՂՈՒԵՍԻՆ ԹՈՉԻԼ ՍՈՎՐԻԼԸ.

Աղուեսին խելքին փչեց որ թռչնոց պէս թըռչիլ
սովրի. կռունկ մը բռնեց, աղաչեց պաղատեցաւ,
Հոգիս՝ կասէր, արի ինձի քեզի նման բարձրէն թըռ-
չիլ սովրեցուր: Կռունկին ճարը հատաւ, ինչ անէր.
Լաւ է ասաց, արի հեծիր կռնակս, ելաւ մեր աղուի-
սուկը, հեծաւ կռունկին կռնակը: Կռունկը գետնէն
քիչ մը բարձրացաւ, յետոյ վար իջաւ, իջեցուց
վար աղուէսը: Ի՞նչպէս աղուեսուկ, ասաց, թռչիլը
լմաւ բան է թէ չէ: — Շատ լաւ, շատ լաւ, պատաս-
խանեց աղուէսը: «Ուրեմն արի նորէն հեծիր»: Ա-
ղուէսը նորէն հեծաւ, կռունկը առջինէն քիչ մը ա-
ւելի վեր բարձրացաւ. յետոյ նորէն գետին իջաւ,

աղուէսն ալ վար իջեցուց, «Ի՞նչպէս՝ ասաց, աղուե-
սուկ, թըռչիլը լմաւ բան է թէ չէ, «Աքանչեկի բան»
պատասխանեց աղուէսը: «Ուրեմն արի նորէն հեծիր
կռնակս ասաց կռունկը»: Աղուէսը հեծաւ նորէն. կը-
ռունկը վեր վերցաւ գետնէն. քանի գնաց բարձրա-
ցաւ, մինչեւ ամպերուն հասաւ. բայց արի տես դուն
բանը որ ճար չկար աղուէսը այն բարձրութենէն
վար իջեցընելու: Դարձաւ ասաց աղուեսուկին. «Հապա
հիմա ինչ կասես. թռչիլը լմաւ բան է թէ չէ»: Աղուէ-
սին խօսքը գեռ բերանն էր, չարաչար գետին ըն-
կաւ, եւ այնպէս ջարդուբուրդ եղաւ որ մէկ ոսկորն
ալ ողջ չմնաց:

ՆԱՆՆԻԿ.

Նաննիկ նաննիկ, սիրուն գառնիկ,
Մօրըդ սըրտին անգին գանձիկ.
Ես քեզ նայող դայեակ ագնիւ
Առի արեւ՝ հովն ու արծիւ:

Արծիւը գնաց մութ անտառը,
Արեւը շուտ մըտաւ մարը,
Հովը երեք օրէն ետեւ
Թըռաւ գընաց իրեն մօրը:

Մայրը հարցուց. հովիկ աղբար,
Ո՞ւր գընացիր որ ուշ եկար.

Ասողերուն հետ արիւր կըռիւ ,
Թէ ծովին հետ ծեծկըւեցար :

Ես ասողերուն չըմօտեցայ ,
Ես ծովին հետ չըկըռուեցայ .
Տըղայ մի կար քաղցր անուշիկ ,
Զինքն օրեցի ու նայեցայ :

ՏՂԱՅ ԵՒ ՎԱՐԳ.

Տըղուն մէկը վարդ կըքաղէր ,
Մատը փուշէն խայթըւեցաւ .
Ճըւաց ցաւէն ու լալ կուղէր ,
Բայց խելքէր՝ խելք սովրեցաւ
Թէ շատ անգամ զըւարճութիւն սընտախ
Մարդուս սուղի կընըստի :

ՈՍԿԻ ՀԱԻԿԻԹ.

Մարդուն մէկը հաւ մը ունէր անսովոր ,
Ոսկի հաւկիթ կածէր իրեն ամէն օր .
Ասաց մըտքէն. սորա փորն է ոսկեհանք ,
Սրի բանանք .
Դանակն աւաւ , փորը ճըղքեց ,
Բան չըգըտաւ , վնայ ինձ կանչեց .
Տես չափազանց ագահութիւնս
Ի՞նչ ձիւն էր որ բերաւ գըլխուս :

ՄՈՂԷՍ ԵՒ ԿՐԻՍՅՈՒ

Մողէսն ասաց Կրիային .
Այ դու խեղճ ողորմելի .
Կրիան ասաց Մողէսին ,
Ինչո՞ւ եմ ողորմելի :
— Հապա՞ , ուր որ գնալու լինիս՝
Տունըդ շափած հետ կըտանիս :
Կրիան ասաց . Այո Մողէս , իրաւ է .
Սակայն օգտակար բերը
Ծանրը բեր չէ , թեթեւ է :

ԿՍՊԻԿ ԵՒ ԱՂՈՒԷՍ.

Կասկին մէկը հըտողանելով կըցատքըտէր ,
Ու կենդանեաց մէջ պարծելով այսպէս կասէր .
Ձեր մէջ ո՞վ կայ տեանեմ ինձի պէս յաջողակ
Որ ամենուն շարժմանցն անէ նըսնըմանակ :
Աղուէսն անոր դարձաւ ասաց ժըպտելով .
Դուն յայս ժողով
Եթէ կըրնաս գըտիւր մէկ հաս օրինակ
Որ յօժարի լինել քեզի նըմանակ :

ԿԱԿԱԶ ԵՒ ՄԵՆՍԱԿ. Մ

Կակաչ մը կար՝ դըտնըւեցաւ Մ
 Փունջի մը մէջ Մեխակին հետ :
 Երկրորդ օրն ինք ալ ունեցաւ
 Անոր նըման մեխակի հոտ :
 — Բարի մարդօց ընկերութեան
 Պըտուըն ալ էլ ասոր նըման :

ՓՈՇԻ ԵՒ ԱՐԵԻ.

Արեւ արեւ, աեւ ինչպէս քեզ մթընցուցինք
 Ասաց փոշին՝ որ քամիով կելլէր երկինք :
 Ասաց Արեւն, Այո, բայց զուր կը պարծենաք,
 Հովը դադրի, ցեխ էլք՝ ցեխ պիտի դառնաք :

ԿԱՂ ԵՒ ԿՈՅՐ.

Երկու ճամբորդ ի միասին կերթային.
 Մէկը կաղ էր, իսկ միւսը կոյր եղկելին.
 Գետ մը հասան, կոյրը շալկեց ըզկաղը,
 Յաջողութեամբ անցան ջրէն գընացին :

ՏՂԱՆ ԲԱՐՁՐ ՏԵՂ.

Տըղուն մէկը սեղանի մը վըրայ ելաւ
 Ու կըզմայլէր բարձրահասակ տեսքին վըրայ.
 Տեսնողներէն մէկը դարձաւ՝ իրեն ըսաւ.
 Վար որ իջնաս՝ իսկոյն հասակըդ կըցածնայ :
 — Ո՞վ է արդեօք անոր նըման անմիտ տըղայ. —
 Ով որ ունայն հարըստութեամբ կը պարծենայ :

ԽՈՁԻՆ ԶԱՐԴԱՐԱՆՔԸ.

Կապիկ մը կար՝ խիստ բամպառակ տեսակէն.
 Քաղեց քանի մը ծաղկըներ դաշտերէն,
 Տարաւ անցուց խոզին երկու անկըճին,
 Կըցուցընէր մատով մէկուն մէկալին :
 Յիմար խոզը հըպարտացաւ իւր տեսքին,
 Քիթը տընկեց, խորդաց ձայնովն ահռելին.
 Թող ամէնքը տան ինձ պատիւ յարգութիւն,
 Քահ Քահ խընտաց անոր վըրան Ազուէսը.
 Գընաց մօտիկ, դիտեց դունչն ու երեսը,
 Մի շըփանար՝ ասաց՝ տեսքիդ, բարեկամ.
 Նայէ քեզի ինչ օգտակար խըրատ տամ.
 Ո՞վ անյարմար զարդով կարծէ զինք շըքեղ,
 Եւս առաւել կըլլայ կոպիտ ու տըղեղ :

ԳԵՂԱՅՈՒՅՆ ՊԱՆԻՐԸ.

Գեղջուկը դարանին մէջ
 Գլուխ մը պանիր դըրած կըլլայ.
 Դարանին ճեղքէն նայի,
 Տեսնէ որ մէջը մուկ մը կայ.
 Շուտ մը կառնու իրեն կատուն,
 Ու դարանէն ներս կարծրկէ,
 Կարծելով որ պանիրը
 Մուկին ձեռքէն ազատ պահէ:
 Իսկ մեր փիսիկը դարանին
 Մէկ անկիւնը պահուրտեցաւ.
 Առաջ մուկը բըռնեց կերաւ,
 Յետոյ պանիրն կողը մըտաւ.

ՃՐԱԳ ԵՒ ԼԱՊՏԵՐ.

Ճըրագն օր մը կասէր իրեն լապտերին.
 Լապտեր, ինչո՞ւ զիս քու մէջըդ կըբանտես.
 Չես թողուր որ պայծառ փայլիմ ամէն դին.
 Թող դուրս ելլեմ, լոյս տամ արեգական պէս,
 Լըսեց լապտերը, բացաւ իւր դըռնակը.
 Բայց հարցուր թէ ինչ շահեցաւ ճըրագը: —
 Հըպարտութեանը պատիժն ու նախատինքը. —
 Փըչեց վըրան սաստիկ քամին, անցուց զինքը:

ՕՁ ԵՒ ՏՋՐՈՒԿ.

Օձը մէկ օր մը կասէ Տըզրուկին.
 Տըզրուկ, ասա ինձ, հոգիդ կըսիրես.
 Խայթոց դարնելու մէկուն մէկալին
 Երկուքս ալ վարպետ, թէ դուն եւ թէ ես.
 Հապա ինչ է որ մարդիկ անդադար
 Ըզքեզ կըփընտուեն, ինձնէ կըփախչին.
 Արդեօք ինչէն է. ինչ ունին պատճառ:
 Տըզրուկն ինչ տըլաւ պատասխան օձին.
 Ասոր պատճառը այս է՝ սանահար,
 Որ քու խայթոցըդ մարդ կըմեռցընէ.
 Իսկ իմ խածուածքքս չէ վընասակար,
 Այլ հիւանդներն ալ կառողջացընէ:

ԱՌՈՒԱԿ.

Ո՞ւր կերթան ոլոր մոլոր
 Այս Առուակին ջրերը,
 Կասէր տըլայ մը իւր մօր
 Ջրին տընկած աչքերը.
 Արդեօք նորէն դէպ ի վեր
 Կուգան այսպէս պըսպըղուն
 Որ ջրեն այս ծաղկըներ,
 Այդ արօտները սիրուն:

— Ոչ՝ զաւակըս, մայրն ըսաւ .
 Առուակը իւր աղբիւրէն
 Մէկ անգամ մը որ ելաւ,
 Երբէք չի գառնար նորէն,
 Ահա այսպէս անգագար
 Մարդուս օրերը կանցնին .
 Անցածները չեն գառնար,
 Գալիքները կը պակսին .

ՀՐԵՇՏԱԿ.

Մարդիկ երբ զիս գովել ուզեն,
 Զիս հրեշտակի կը նմանցընեն .
 Արի ջանամ որ այդ սիրուն
 Անունն ինձի վայլեցընեն .
 Լինիմ հանգարտ, խելօք, հեղիկ,
 Զըւարթերես ու միշտ քաղցրիկ,
 Միշտ հընազանդ, աղօթասէր,
 Եւ խեղճերուն համար գողտրիկ .
 Այնպէս անեմ որ ի յերկրի
 Իրօք լինիմ հրեշտակ բարի,
 Կամ թէ երբոր երկինք երթամ՝
 Հրեշտակներուն դասիմ կարգի :

ԵՐՁԱՆԻԿ ՏՂԱՅ.

Հագար երնեկ տամ այն տղոն
 Որ Աստուծոյ է սիրելի,
 Իւր հօրն ու մօրը խօսքերուն
 Հըլու հնազանդ ու շնորհալի,
 Նա օրէ օր կաճի խելքով
 Ինչպէս սիրուն շուշան ծաղիկ,
 Յըստակ առուի ջրերուն քով
 Կը ծածանի, հողմով հեղիկ .
 Ինչպէս շուշանն այն գեղանի
 Պատըստարի պաղ հիւսիսէն,
 Այսպէս եւ նա ըզգոյշ լինի
 Զար ընկերաց օրինակէն :

ՎԻՇՏ ԵՒ ԶԱՆՁՐՈՒԹԻՒՆ.

Աղքատ մը կայ խիստ անօթի,
 Հացի կարօտ, դանգատ կանէ .
 Հարուստ մը կայ՝ միշտ փորը կուշտ,
 Կը ձանձրանայ ամէն բանէ :
 Արդեօք ասոնց որն աւելի
 ծաւ կը քաշէ ու նեղութիւն .
 Տես իմաստուն մը ինչ կասէ,
 Եւ հասկըցիր տարբերութիւն .

Չանձրացկոտին համար չըկայ
Ոչ ցանկութիւն՝ ոչ ըզբօսանք.
Իսկ ցաւ ու վիշտ քաշողին քօլ
Քաղցրիկ յոյսն է մեծ ըստփանք:

ՆԱՐԻՆՆԸ.
Ո՛վ չըզիտեր թէ նարինջը
Քաղցր ու համեղ պըտուղ է:

Սնիորձ տըղուն մէկը յանկարծ
Լաւ նարինջ մը կըխածնէ իսկ
Ո՛ւֆ կըկանչէ գառնութենէն:
Սյո ինչ անշահ պըտուղ է:
— Ծուռ գատաստան չանես՝ օրգեակի
Հայրը անդիէն կասէ .

Հանէ նախ գըրտի կըճեպը,
Տես միջուկն ինչ համեղ է:

«Անդադար ետ ետ կերթաս, այճիմար»
կասէր ձագին ծեր թեչափառ:
«Առանջ գընա միշտ՝ առանջ,
Թէ չէ՛ հաւտա որ ծեծ կուտես չարացար»: —

«Բայց հայրիկ, մատանդը ըլլամ,
Յուցուր ինծի գէթ միանգամ
Թէ ինչ կերպով պէտք է քալեմ.
Հրամէ դուն առաջ անցիր,
Եւ ինչ կուզես ինծի արա
Թէ որ քեզի պէս չըքալեմ»:

ՅԻՄԱՐ ԵՒ ԳՈՉԱՐ.

Յիմարին ձեռքը քար մ'ընկաւ,
Քար չէր, հասկա անդին գոհար.
Իբրը թէ ալ ճանչցողս եղաւ,
Նայեցաւ վըրան խրոխտաբար,
Առաւ նետեց ի գետը,
Յետոյ զըզջաց տըզէտը:

ԳԱՌՆՈՒԿ ԵՒ ԽՈՋԻԿ.

Գեղացին սայլը դըրած կըտանէր
Գառնուկ մը, եւ անոր հետ խողու ձագ.
Ո՛ւր ասես նէ, մորթելու—յայտնի բան էր:
Խողիկը ձայնը ձրգած՝ այնպէս կանէր կանչ ու ֆիչ,
Որ կարծես՝ դանակն առած՝ էտին ընկած էր դափիճ,
Վայ ի՛նձ, վայ ի՛նձ կըֆըւար. ձայնը աշխարհք էր բըռնած.
«Ձայնըդ պակսի՛ ա՛յ անիծած»
Կանչեց անդիէն գեղացին.

«Ձե՞ս ամբնար. գոնէ նայէ գառնուկին .

Տես ի՞նչպէս խելօք է . ամենեւին ձայն չը՛հաներ» : —

«Ձէ պարոն , յիմար է դա» պատասխանեց խոզիկը ,
ես զինքը ամենեւին խելօքի մը տեղ չեմ դըններ .
Խեղճը կարծէ-Թէ միայն պիտի խուզեն իւր բուրդիկը .
Հապա ես ի՞նչպէս կուզես հանգիստ կենամ .
Խոզու ձագէն բուրդ չեն խուզեր , խիստ աղէկ կըհասկընամ .
Իմ գըլուխըս կըտրել կուզեն , գըլուխըս . չե՞մ գիտեր ՚ ի՞նչ .
Ուրեմն ի՞նչպէս բոլոր ուժովս չըկանչուըռտեմ , վայ—ի՛նձ
վայ—ի՛նձ» :

ՃՆՃՂՈՒԿՔ ԵՒ ԱՐՏՈՒՏ .

Գեղացւոյն մէկը ցանցին տակ շատ մը ճընճղուկ կըբըռնէ ,
եւ այս կերպով յանցանքնին երեսներուն կըզարնէ .

«Ձեզի պէս անամօճներ .

Ձըլէբաց գո՛ղ աւազակներ .

Ի՞նչ ասիք ու արտիս վըրայ Թափեցաք ,
Բոլոր սիսեռներըս կըտրեցիք առիք կերաք .
Դուք այդ տեղն ալ շատ երկար

Ձէք մընար .

ես ամէն մէկուդ գըլուխը կուըրեմ կուըրեմ ,
ու մըսերնիդ այսօրուան փըլաւիս մէջ կըխառնեմ .
Բայց Ա՛րտուտիկ , դուն ի՞նչ կընես այս տեղը» :

Արտուտը ցանցին տակէն պատասխանեց՝ անմեղը .

«Տես ի՞նչ կըսեմ քեզի՛ ա՛ղա .

Ցանցանք մ՛ ունիմ նէ զուրցէ , ասեմ մեղայ .
ես յիբաւի ասոնց հետ մէկտեղ Թըռայ հոս եկայ ,
Բայց հաւատա որ սիսեռէդ մէկ հատիկ մ՛ալ չըկերայ :

Արձըկէ զիս , երթամ բանըս , ինձմէ քեզի վընաս չըկայ .

Մի՞թէ զիս ալ դոցա հե՞տ պիտի պատժես . մ՛ը՛ներ աղա» —

«Հապա՞ ասաց գեղացին . մի՞թէ քեզի խնայե՞մ պիտի .

Դուն քեզի մեղադրէ , ոչ ինձի՛ ոչ ուրիշի ,

Դուն ալ Թէ որ գող մը չէիր ,

Գողերուն մէջ ի՞նչ ունէիր» :

ՁԻՆՈՒՈՐԱՅՈՒԻ ՄՕՐ ՆԱՆՆԻԿ .

Դուն եղիր որդեակ գեղանի

Հայ նաննի նաննի ,

Լուռ նայի քեզ լոյս լուսնեկին

Յայս քում օրբանի :

Քեզ պատմեմ ես պատմութիւններ ,

Խաղ կանչեմ քեզի .

Դուն աչկուներդ փակէ ի քուն ,

Հայ նաննի նաննի .

Երբ ժամանակ դայ կըսովրիս

Կեանք զինուորական ,

Ոտքըդ զարնես ի յառպանդակի

Ձեռք կառնուս հրացան .

ես ձիուդ մի թամբ մետաքսէ

Ինքըս կըկարեմ .

Դուն եղիր սիրուն զաւակըս ,

Հայ նաննի նաննի :

Կերպ կունենաս գիւցազնական

եւ սիրտ պահլաւիկ .



Երբ դամ հեարդ քեզ ճամբելու,
Ետ կասես՝ դարձիք,
Ո՛րքան ես յայն գիշեր թափեմ
Արտասուք ազի . . .
Քուն եղիր որդեակ այժմ հանդիստ
Հայ նաննի նաննի,
Ես պիտի մաշուիմ կարօտով
Սպասեմ անհամբեր,
Օրն անցընեմ սուրբ աղօթիւք,
Գիշերն հըմայիւք.
Միտքըս քեզ հետ, ինչ կըքաշես
Դու յօտար երկրի . . .
Քուն եղիր քանի որ ազատ ես,
Հայ նաննի նաննի,
Ես ճամբու տամ քեզ օգնական
Մէկ սուրբ պատկերիկ.
Երբ առ Աստուած աղօթք ընես՝
Զայն առջեւըդ դիր.
Երբ որ երթաս ահեղ կըռիւ՝
Մայրըդ մի մոռնար . . .
Քուն եղիր դուն որդեակ անմեղ,
Հայ նաննի նաննի:

ՎԵՐՋ ԱՌԱՋՆՈՑ ՄԱՍԻՆ.



149

257



Կամեցողք ունենալ այս ընդերցարանէս, ուզի
պէտք է դառնան առ հրատարակիչն այսու հասցէ

Григорію Егоровичу Дульветову, въ Θεοδοςію.

Dul

2013

4992

«Ազգային գրադարան»



NL0062735

